# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և պաշտոնների անձնագրերով նախատեսված պահանջներին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների անձնական գործերում եղած փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու նպատակով կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ

7 նոյեմբերի 2013 թ.

ք. Աշտարակ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետներ Միքայել Եղիազարյանը և Կարեն Բարսեղյանը, մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Գայանե Վարդանյանի, ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «է» կետերի, Խորհրդի 2002 թվականի հունվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» N 3 որոշմամբ հաստատված կանոնադրության 8-րդ կետի «իա» և «իէ» ենթակետերի, Խորհրդի 2002 թվականի մայիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» N 9 որոշմամբ հաստատված հավելվածի 25-րդ կետի «ա» ենթակետի, Խորհրդի 2002 թվականի հունիսի 1-ի «Քաղաքացիական ծառայողների անձնական գործերը և գրանցամատյանը վարելու կարգը հաստատելու մասին» N 14-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի «Աշխատանքային գրքույկի ձևը, աշխատանքային գրքույկ վարելու և կրկնօրինակ տրամադրելու կարգը սահմանելու մասին» N 876-Ն որոշմամբ, Խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ և Խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի, ինչպես նաև Խորհրդի աշխատակազմի ղեկավարի 2013 թվականի հոկտեմբերի 30-ի N 205-Ա հրամանի պահանջներով՝ կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ ուսումնասիրվել է Մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող 98 քաղաքացիական ծառայողների անձնական գործերում եղած համապատասխան փաստաթղթերը՝ պարզելու համար դրանցում եղած տվյալների համապատասխանությունը Օրենքով և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով նախատեսված չափանիշներին ու պահանջներին, ինչպես նաև Մարզպետարանի աշխատակազմում Օրենքով և Կարգով նախատեսված մի շարք պահանջների պահպանման վիճակը:

Ուսումնասիրությամբ պարզվեց հետևյալը.

Մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված է քաղաքացիական ծառայության 102 պաշտոն, որոնցից 4-ն ուսումնասիրությունը կատարելու օրվա դրությամբ եղել է թափուր:

Մարզպետարանի աշխատակազմում առաջացել է քաղաքացիական ծառայության 48 թափուր պաշտոն (այդ թվում՝ 6 քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն առաջացել է նախորդ ուսումնասիրության ժամանակահատվածում), որոնցից 23-ը համալրվել է մրցույթով, 10-ը՝ կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ունեցող անձանց կողմից, 5-ը՝ արտամրցութային կարգով, 6-ը հանվել է Մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկից, իսկ 4-ը թափուր է:

*1) Տվյալներ Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ կետերի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Քաղաքացիական ծառայողների ուսումնասիրված 98 անձնական գործերում եղած փաստաթղթերի տվյալները համապատասխանում են Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ կետերով նախատեսված պահանջներին:

*2) Տվյալներ Օրենքի 9-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, Խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 942-Ա և Խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուն համաձայնություն տալու մասին» N 943-Ա որոշումների հիման վրա, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի համապատասխան որոշումներով լրացում և փոփոխություն է կատարվել Մարզպետարանի աշխատակազմի հաստիքացուցակում, որի արդյունքում հաստիքացուցակում առաջացել է քաղաքացիական ծառայության 6 պաշտոն, միաժամանակ հաստիքացուցակից հանվել է քաղաքացիական ծառայության 6 պաշտոն, և հաստատվել են համապատասխան պաշտոնների անձնագրերը:

Խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 952-Ա և Խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուն համաձայնություն տալու մասին» N 953-Ա որոշումների հիման վրա, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի համապատասխան որոշումներով լրացում և փոփոխություն է կատարվել Մարզպետարանի աշխատակազմի հաստիքացուցակում, որի արդյունքում հաստիքացուցակում առաջացել է քաղաքացիական ծառայության 4 պաշտոն, միաժամանակ հաստիքացուցակից հանվել է քաղաքացիական ծառայության 8 պաշտոն, և հաստատվել են համապատասխան պաշտոնների անձնագրերը:

Խորհրդի 2012 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 514-Ա և Խորհրդի 2012 թվականի հունիսի 8-ի «Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուն համաձայնություն տալու մասին» N 515-Ա որոշումների հիման վրա, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի համապատասխան որոշումներով լրացում և փոփոխություն է կատարվել Մարզպետարանի աշխատակազմի հաստիքա-

ցուցակում, որի արդյունքում հաստիքացուցակում առաջացել է քաղաքացիական ծառայության 2 պաշտոն, միաժամանակ հաստիքացուցակից հանվել է քաղաքացիական ծառայության 2 պաշտոն, և հաստատվել են համապատասխան պաշտոնների անձնագրերը:

Խորհրդի 2012 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 635-Ա և Խորհրդի 2012 թվականի հուլիսի 17-ի «Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուն համաձայնություն տալու մասին» N 636-Ա որոշումների հիման վրա, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի համապատասխան որոշումներով լրացում և փոփոխություն է կատարվել Մարզպետարանի աշխատակազմի հաստիքացուցակում, որի արդյունքում հաստիքացուցակում առաջացել է քաղաքացիական ծառայության 5 պաշտոն, միաժամանակ հաստատվել են համապատասխան պաշտոնների անձնագրերը:

*3) Տվյալներ Օրենքի 10-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Քաղաքացիական ծառայողների ուսումնասիրված 98 անձնական գործերում եղած փաստաթղթերի տվյալները համապատասխանում են Օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված պահանջներին.

*4) Տվյալներ Օրենքի 11-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Քաղաքացիական ծառայողների ուսումնասիրված 98 անձնական գործերում եղած փաստաթղթերի տվյալները համապատասխանում են Օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

*5) Տվյալներ Օրենքի 12-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Քաղաքացիական ծառայողների ուսումնասիրված 98 անձնական գործերում եղած փաստաթղթերի տվյալները համապատասխանում են Օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված պահանջներին.

*6) Տվյալներ Օրենքի $12^1$-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Օրենքի $12^1$-րդ հոդվածով նախատեսված կարգով Մարզպետարանի աշխատակազմում 23 թափուր պաշտոն զբաղեցվել է մրցույթով, 5-ը՝ արտամրցութային կարգով:

*7) Տվյալներ Օրենքի $12^2$-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության 5 պաշտոն համալրվել է արտամրցութային կարգով՝ Օրենքի $12^2$ -րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա, իսկ Օրենքի $12^2$ -րդ հոդվածի 2-րդ մասով դեպքեր չեն կիրառվել

Օրենքի $12^2$-րդ հոդվածով սահմանված պահանջները պահպանվել են.

*8) Տվյալներ Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության կողմից 2010 թվականի հոկտեմբերի 8-ին կատարված ուսումնասիրությունից հետո Մարզպետարանի աշխատակազմում առաջացած 42 քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների վերաբերյալ Օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված եռօրյա ժամկետում տեղեկացվել է Խորհրդին:

*9) Տվյալներ Օրենքի 15-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Քաղաքացիական ծառայողների ուսումնասիրված 98 անձնական գործերում եղած փաստաթղթերի տվյալները համապատասխանում են Օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված պահանջներին: Մարզպետարանի աշխատակազմում Օրենքի 15-րդ հոդվածի 3.1-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ունեցող անձանց կողմից համալրվել է քաղաքացիական ծառայության 10 պաշտոն.

*10) Տվյալներ Օրենքի 18-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Մարզպետարանի աշխատակազմում Օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին համապատասխան քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կնքվել է 9 ժամկետային աշխատանքային պայմանագիր, որոնցից 7-ը լուծվել են ժամանակավոր թափուր պաշտոն առաջացման հիմքի վերացման պատճառով:

*11) Տվյալներ Օրենքի 19-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Քաղաքացիական ծառայողների ուսումնասիրված 98 անձնական գործերում եղած փաստաթղթերի տվյալները համապատասխանում են Օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված պահանջներին.

*12) Տվյալներ Օրենքի 20-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Քաղաքացիական ծառայողների ուսումնասիրված 98 անձնական գործերում եղած փաստաթղթերի տվյալները համապատասխանում են Օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված պահանջներին.

*13) Տվյալներ Օրենքի 24-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Քաղաքացիական ծառայողների ուսումնասիրված 98 անձնական գործերում եղած փաստաթղթերի տվյալները համապատասխանում են Օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պահանջներին.

*14) Տվյալներ Օրենքի 29-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 942-Ա և Խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 952-Ա որոշումների հիման վրա Մարզպետարանի աշխատակազմում Օրենքի 29-րդ հոդվածի պահանջներին համապատասխան քաղաքացիական ծառայության 9 պաշտոններում կատարվել են նշանակումներ.

*15) Տվյալներ Օրենքի 31-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Մարզպետարանի աշխատակազմում Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով 2 քաղաքացիական ծառայող արժանացել է խրախուսանքի՝ կարգապահական տույժի հանում:

*16) Տվյալներ Օրենքի 32-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Մարզպետարանի աշխատակազմի 8 քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվել է Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված կարգապահական տույժ՝ նկատողություն, 8 քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվել է Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

Օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները պահպանվել են.

17) Խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության կողմից 2010 թվականի հոկտեմբերի 8-ին կատարված ուսումնասիրությունից հետո Մարզպետարանի աշխատակազմում Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու հիմքով 1 քաղաքացիական ծառայող ազատվել է Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, իսկ Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «դ», կամ «գ» և «զ», կամ «դ» և «զ» կետերով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կիրառելու, ինչպես նաև Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ի» կետի դեպքեր չեն արձանագրվել (տեղեկանք 1 թերթ).

*18) Տվյալներ Օրենքի 34-րդ հոդվածի պահանջների պահպանման վիճակի վերաբերյալ.*

Քաղաքացիական ծառայողների ուսումնասիրված 2 անձնական գործերում եղած փաստաթղթերի տվյալները համապատասխանում են Օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված պահանջներին.

*19)* Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են քաղաքացիական ծառայողների անձնական գործերի վարման թերացումներ, որոնց վերաբերյալ տրվել են մեթոդական պարզաբանումներ և ցուցումներ:

*20)* Ուսումնասիրվել է Մարզպետարանի աշխատակազմի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթի թվով 2 փաթեթ, որի արդյունքում Օրենքի, Խորհրդի որոշումների և այլ իրավական ակտերի պահանջների խախտումներ չեն հայտնաբերվել:

Միաժամանակ Մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնից վերցվել են Արամ Գուրգենի Սարգսյանի անձնական գործերում եղած համապատասխան փաստաթղթերի պատճեններ լրացուցիչ ուսումնասիրություն նպատակով:

Սույն արձանագրությանը կցվում են՝

ա) 2013 թվականի նոյեմբերի 7-ի դրությամբ Մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների անվանական ցանկի վերաբերյալ տեղեկանքը՝ 5 թերթից,

բ) առաջացած թափուր պաշտոնների վերաբերյալ տեղեկանքը՝ 5 թերթից,

գ) վերակազմակերպման և կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) հետևանքով կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկանքը՝ 2 թերթից,

դ) մրցութային կարգով նշանակումների վերաբերյալ տեղեկանքը՝ 2 թերթից,

ե) արտամրցութային կարգով կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկանքը՝ 1 թերթից,

զ) կարգապահական տույժերի և խրախուսանքի վերաբերյալ տեղեկանքը՝ 3 թերթից,

է) ժամկետային աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ տեղեկանքը՝ 2 թերթից,

Ուսումնասիրությունը կատարվեց Մարզպետարանի աշխատակազմում՝ 2013 թվականի նոյեմբերի 5-7-ը ներառյալ:

Արձանագրությունն ընթերցվեց բարձրաձայն, մասնակիցների կողմից հայտարարություններ, առաջարկություններ, դիտողություններ չեղան, տպված է ճիշտ:

Արձանագրությունը կազմեցին՝

Մասնակիցներ՝

---------------- (Մ. Եղիազարյան)

---------------- (Կ. Բարսեղյան)

Արձանագրության մեկ օրինակը ստացա՝

---------------- (Գ. Վարդանյան)

Արձանագրությանը ծանոթացա՝

---------------- (Հ. Գևորգյան)